Արձանագրություն N3

ՀՀ Ազգային ժողովի կողմից կազմակերպված «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/19» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի

15 նոյեմբերի 2018թ.
Ժամը՝ 11:15

ք. Երևան

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Թորոսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Ավագյան, Ս. Սարգսյան, Վ. Քեռյան, Ա. Խուդինյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան

1. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացության վերաբերյալ

Համաձայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության՝ Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ***1-ին տեղ զբաղեցրած մասնակից «Դամկար» ՍՊԸ-ն*** չի բավարարում «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5; դեմ՝ 0:

2.Նիստը կասեցնելու վերաբերյալ

Հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 23-րդ կետով և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ և 47-րդ կետերով ***որոշեց՝*** նիստը կասեցնել՝ առաջարկելով Ընկերությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/19» ծածկագրով ընթացակարգի նիստը 19.11.2018թ. վերսկսելու վերաբերյալ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում առաջին տեղն զբաղեցրած մասնակից ***«Դամկար» ՍՊԸ-ի*** կողմից չի շտկվել, ուստի Հանձնաժողովը ղեկավարվելով Կարգի 24-րդ կետի 2-րդ ենթակետով որոշեց՝ մերժել վերջինիս հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից՝ «ԳՈՐԾ-555» ՓԲԸ-ին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

4.Փաստաթղթեր ներկայացնելու վերաբերյալ

Ղեկավարվելով Կարգի 19-րդ կետի 4-րդ ենթակետով՝ համակարգի միջոցով ծանուցել «ԳՈՐԾ-555» ՓԲԸ-ին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

5 ՀՀ ԿԱ պետական եկամուտներ հարցում ներկայացնելու վերաբերյալ

Ղեկավարվելով Կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել հարցում՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել 23.11.2018թ. ժամը 11:15-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

23.11.2018թ. ժամը 11:15-ին տեղի ունեցած «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/19» ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման վերաբերյալ

7.Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացության վերաբերյալ

Հանձնաժողովը որոշեց.

Հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվությունը՝ «ԳՈՐԾ-555» ՓԲԸ-ի ներկայացրած հայտարարությունները համարել իրականությանը համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

8. Որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի վերաբերյալ

Հանձնաժողովն ուսումնասիրելով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «ԳՈՐԾ-555» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը, որոշեց՝ հայտը գնահատել բավարար և վերջինիս հայտարարել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

9. Անգործության ժամկետի վերաբերյալ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Վ. Թորոսյան

անդամներ՝ _____ Ա. Ավագյան

_____ Ս. Սարգսյան

_____ Վ. Քեոյան

_____ Ա. Խուդինյան

Քարտուղար՝ _____ Ա. Գրիգորյան